ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 4-ը Էստոնիայի և Ֆինլանդիայի Հանրապետություններ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝ Հայկ Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Էստոնիայի և Ֆինլանդիայի Հանրապետություններ, 2023թ. Մայիսի 29-ից մինչև հունիսի 4-ը ներառյալ

4. Հրավիրող կողմը՝ Համաշխարհային բանկ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված ռազմավարական պլանավորման թեմայով ճանաչողական-ուսուցողական այցին:

6. Քննարկված թեմաները՝

- Ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման համակարգը Էստոնիայում,
- Էստոնիայի ռազմավարական շրջանակը,
- Կառավարության գործունեության ծրագրի և բյուջետային ռազմավարության կապի ապահովման կառուցակարգերը,
- Էստոնիայի պետքարտուղարության դերը և գործառույթները ռազմավարական պլանավորման գործընթացքում, համագործակցությունը Ֆինանսների և ոլորտային նախարարությունների հետ,
- Քաղաքացիական ծառայողների և քաղաքական գործիչների համագործակցությունը,
- Կատարողականի վրա հիմնված բյուջետավորում (Performance Based Budgeting). բարեփոխման նպատակները և հայեցակարգը, տաբեր ռազմավարությունների և բյուջետային պլանավորման միջև կապի ապահովման կառուցակարգերը, բարեփոխման արդյունքները և իրականացման մարտահրավերները,
- Ռազմավարական պլանավորման և քաղաքականության մշակման համակարգը Ֆինլանդիայում, համակարգի ընդհանուր բնութագիրը և կայացման էվոլյուցիան, ռազմավարությունների հիերարխիան,
- Փաստահեն պլանավորում,
- Հանրային կառավարման արդիականացումը որպես երկարաժամկետ նպատակ,
- Ռազմավարական պլանավորումը Ֆինլանդիայի սոցիալական հարցերի և առողջապահության նախարարության օրինակով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Այցի շրջանակներում աշխատանքային խումը ճանաչողական հանդիպումներ է ունեցել Էստոնիայի պետքարտուղարության և ֆինանսների նախարարության, Ֆինլանդիայի վարչապետի աշխատակազմի, ֆինանսների, ինչպես նաև սոցիալական հարցերի և առողջապահության նախարարությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

- Քննարկումները եղել են արդյունավետ, իսկ ընտրված թեմաները՝ արդիական,
- Այցի շրջանակներում Էստոնիայի և Ֆինլանդիայի պետական ծառայողների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության վերաբերյալ:

8. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետ Հայկ Հարությունյան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Invalid signature

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN HAYK 1709920246 **06.06.2023թ.**